

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

09.01.2017թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- S. Բադոյանը - մարզպետի տեղակալ
- Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ. Պապոյանը, Ս. Լամբարյանը, Մ. Սայադյանը, Ա. Ջանազյանը, Դ. Մանուչարյանը, Ա.Շահվերդյանը, Ա. Օհանյանը, Լ. Բերոյանը, Ա. Սահակյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Աղլոյանը, Ս. Գրիգորյանը, Ս.Խեչումյանը, Հ. Մկրտչյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ. Ապլանյանը - մարզպետի խորհրդական
- Ա. Մանուկյան - մարզպետի խորհրդական
- Ա. Սարգսյանը - մարզպետի օգնական
- S. Էվինյանը - մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ`

1. ա/ «Սմարթ» դասարանների նախապատրաստական աշխատանքների խումբ ձևավորելու մասին
բ/ ՀՀ համապետական ընտրությունների կազմակերպման նախապատրաստական աշխատանքների մասին
գ/ Լոռու մարզի 2017-25թ.թ. զարգացման ռազմավարական և համայնքների զարգացման հնգամյա ծրագրերի մշակման աշխատանքների ընթացքի մասին
դ/ Լոռու մարզային ենթակայության առողջապահական և կրթական հաստատությունների օպտիմալացման աշխատանքների ընթացքի մասին
ե/ Լոռու մարզի ֆինանսավորման ենթակա ներդրումային ծրագրերի մասին
/Ա.Նալբանդյան/
2. Ամանորյա հերթապահությունների և կազմակերպվող միջոցառումների մասին
/Զեկ. Ն.Սարգսյան/
3. ա/ Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին
բ/ Համայնքներում բյուջեների կազմման ծրագրերի ընթացքի մասին
/Զեկ. Հ.Պապոյան/
4. Աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուների պարարտանյութերի բաշխման և պարտքերի հավաքագրման աշխատանքների մասին
/Զեկ. Գ.Հակոբյան/
5.Դեկտեմբերի 14-ին կայացած ատեստավորման մասին
/Զեկ. Ա.Աղլոյան/
6. Այլ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց`

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Հ. Թադևոսյանին, Տ. Բաղդոսյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության պետ Հ. Պապոյանին՝

Կատարել անհրաժեշտ վերլուծություններ համայնքների բյուջեների կազմման համաչափության առումով, անհրաժեշտ ուշադրություն դարձնել ըստ ոլորտների ծախսերի հիմնավորվածությանը և օրինաչափությանը և 5-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն ու առաջարկություններ քննարկման արդյունքների, ինչպես նաև մարզի խոշոր համայնքների զարգացման ծրագրերի վերաբերյալ:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ն. Սարգսյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին՝

Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել համայնքների ղեկավարների հետ համապետական /Ազգային ժողովի/ ընտրությունների կազմակերպման և ժամանակացույցով սահմանված գործառույթների իրականացման ու անցկացման ուղղությամբ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել և շրջաբերականով դիմել համայնքների ղեկավարներին՝ համայնքների կողմից տարեկան հաշվետվությունների ներկայացմանը հանրության և մարզպետարանի ներկայացուցիչների մասնակցությունը և թափանցիկությունը ապահովելու նպատակով:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

Նախորդ տարվա կատարած աշխատանքների հաշվետվությունը՝ սեղմագիր տարբերակով մինչև սույն թվականի հունվարի 20-ը ներկայացնել զարգացման ծրագրերի և վերլուծությունների բաժին՝ դրանում ներառելով ինչպես կատարած աշխատանքները, այնպես էլ անելիքները, բացթողումները և առաջարկությունները:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձ. Ա.Մակարյան

Հեռ. 0322/4- 32- 99/